ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 5760-Ա «24» նոյեմբերի 2026թ.

Ս. ԲՈՒՌՆԱԶՅԱՆ ՓՈՂՈՑԻ Հ.110 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՎՈՂ
ՀՈՂԱՄԱՍԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՃՇՏԵԼՈՒ
ԵՎ ՀԱՏԱԿԱԳԻԾ ԹՈՂԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վարչական ակտի ընդունման համար հիմք են հանդիսացել ՀՀ վարչական դատարանի վարչական գործ թիվ ՎԴ/4687/05/23 վճիռը և Վարդան Դանիելյանի լ/ա Կարեն Մեժլումյանի դիմումը՝ Ս. Բուռնազյան փողոց հ.110 հասցեում գտնվող հողամասի սահմանները ճշտելու և հատակագիծ թողարկելու մասին:

Երևան քաղաքի ՀՀ վարչական դատարանի 2024 թվականի նոյեմբերի 14-ին կայացրած և օրինական ուժի մեջ մտած ՎԴ/4687/05/23 վճռով Երևանի քաղաքապետարանին պարտավորեցվել է տրամադրել Ս. Բուռնազյան փողոցի հ.110 հասցեում գտնվող հողամասի սահմանների ճշտման վերաբերյալ հողամասի հատակագիծ:

Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի սեպտեմբերի 10-ի հ.204-Ն որոշմամբ հաստատված Երևան քաղաքի գլխավոր հատակագծի համաձայն՝ քննարկվող հողամասը գտնվում է բնակավայրերի բնակելի կառուցապատման գոտում:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2020թ. հունիսի 4-ի հ.1023-Ն որոշմամբ հաստատված հավելվածների՝ ըստ տարածագնահատման համաձայնեցված սխեմայի հողամասը գտնվում է 5-րդ գոտում /ծածկագիր՝ 01-005-0228-0069/:

Հիմք ընդունելով ՀՀ վարչական դատարանի թիվ ՎԴ/4687/05/23 վարչական գործով օրինական ուժի մեջ մտած վճիռը, հաշվի առնելով Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության հ.Դ-118678-26 և Ն/34482-23 եզրակացությունները.

1.Սահմանել, որ Ս. Բուռնազյան փողոցի հ.110 հասցեում գտնվող հողամասի մակերեսը կազմում է 87.0քմ:

2.Հողամասի սահմանները որոշվում են սահմանված կարգով հաստատված հատակագծով:

3.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

4.Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության, անշարժ գույքի կառավարման վարչությունների պետերի վրա:

5. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ղեկավարը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ